


**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Մարզկենտրոնը՝ ք. Գավառ



<i>Մարզի տարածաշրջանները՝</i>	<i>Քաղաքները՝</i>
Գավառի	Գավառ
Ճամբարակ	Ճամբարակ
Մարտունու	Մարտունի
Սևանի	Սևան
Վարդենիսի	Վարդենիս

Վարչատարածքային բաժանումը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ

	Տարածքը, քառ. կմ	Բնակչու- թյան խտությունը մեկ քառ.կմ վրա	Համայնքներ			Գյուղական բնակա- վայրեր
			ընդա- մենը	քաղա- քային	գյուղա- կան	
Հայաստանի Հանրապետություն	29743	109	926	48	866	949
ՀՀ Գեղարքունիքի մարզ	5348 ¹	45	92	5	87	93

ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաքները

(հունվարի 1-ի դրությամբ)

Քաղաքի անվանումը	Հեռավորությունը մինչև Երևան, կմ ²	Մշտական բնակչության թվաքանակը, հազ.մարդ				
		2006	2007	2008	2009	2010
Գավառ	92	26.1	26.0	25.8	25.7	25.7
Ճամբարակ	119	7.4	7.4	7.4	7.4	7.4
Մարտունի	130	11.9	11.9	12.0	12.0	12.1
Սևան	66	21.6	21.6	21.6	21.7	21.7
Վարդենիս	168	12.7	12.7	12.7	12.7	12.7

ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է ՀՀ տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը	
Տարածքը՝ ներառյալ Սևանա լիճը	5348 կմ ²
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	18 %
Մարզը	
<ul style="list-style-type: none"> • հյուսիսից սահմանակից է ՀՀ Լոռու և Տավուշի մարզերին, • արևելքից՝ պետական սահմանով սահմանակից է Ադրբեջանին, • հարավից՝ ՀՀ Վայոց ձորի մարզին, • հարավ-արևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ ՀՀ Կոտայքի մարզին 	
Առավելագույն ձգվածությունը, կմ	
• հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝	115
• արևմուտքից արևելք՝	85
Ամենախոր իջվածքը, մ	
• Գետիկ գետի կիրճն է (գյուղ Չորավանք)	1325
Ամենաբարձր կետը, մ	
• Աժդահակ լեռան գագաթը	3598
Բարձր լեռներն են, մ	
• Սպիտակասարը	3555
• Վարդենիսը	3522
• Գեղասարը	3446
Խոշոր գետը, կմ	
• Հրազդան	141
Ամենաերկար գետերն են, կմ	
• Արգիճին	51
• Գավառագետը	50
• Մասրիկը	45

¹Ներառյալ Սևանա լիճը:

² Ըստ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 2008թ. ճշգրտված տվյալների:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը:

Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ պետական սահմանով, սահմանակից է Ադրբեջանին, հարավից՝ ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ ՀՀ Կոտայքի մարզին:

Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավարևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (Ձորավանք գյուղ, 1325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3598 մ):

Բարձր լեռներն են Սպիտակասարը (3555 մ), Վարդենիսը (3522 մ), Գեղասարը (3446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ):

Հայաստանի տարածքում ամենամեծ լիճը **Սևանա լիճն է** (2009թ. միջին տարեկան մակերեսը 1265.5 կմ²):

Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակ, լճից սկիզբ է առնում միայն Հրազդան գետը:

Լիճն անտնտեսվար և անխնա օգտագործումից խիստ տուժել է և ջրային պաշարները զգալիորեն նվազել են: Լճի մակարդակի իջեցման, ինչպես նաև լիճ թափվող անբավարար մաքրված հոսքաջրերի հետևանքով, կտրուկ վատացել էր նաև ջրի որակը: Իրավիճակը մասնակիորեն մեղմացնելու և Սևանի ջրային պաշարներն Արփա գետի ջրերով ավելացնելու նպատակով, 1981թ. կառուցվել է 48 կմ 420 մ երկարությամբ <<Արփա-Սևան>> **թունելը**, որը լճի հետ միանում է 850 մ երկարությամբ բաց ջրանցքով:

Լճի պահպանության վերջին տարիների համալիր միջոցառումներն արդյունավետ իրականացնելու շնորհիվ, զգալիորեն բարձրացել է ջրի մակարդակը (Սևանա լճի մակարդակը 2010թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել է 1900.04 մ):

Սևանա լիճը ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա:

Մարզի տարածքում է գտնվում <<Սևան>> **ազգային պարկը** (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ.հա, որից 24.9 հազ.հա՝ առափնյա ցամաքային տարածքներ են: Լիճը շրջափակված

է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1600 և կենդանիների 330 տարատեսակներ:

Մարզի տարածքով անցնում է Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող <<Հարավ-Հյուսիս>> մայրուղին:

Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

2009թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատ-վածների տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան հատվածների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 1.8 %,
- գյուղատնտեսություն 17.0 %,
- շինարարություն՝ 3.3 %,
- մանրածախ առևտուր 1.3 %,
- ծառայություններ՝ 1.0 %:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը գյուղատնտեսությունն է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: ՀՀ Գեղարքունիքի մարզը թարմ ձկան հիմնական մատակարարն է:

Մարզի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքները, արտադրությունը:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Քաղաք Գավառ

Մարզկենտրոնը Գավառ (2009թ. տարեվերջին՝ 25.7 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա:

Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էապես կրճատվել է:

Այժմ տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը **գյուղատնտեսությունն է:**

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն է**, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:

Մևան քաղաք

Մևան քաղաքը (նախկին՝ Ելենովկա, 2009թ. տարեվերջին՝ 21.7 հազ. բնակիչ, Երևանից 66 կմ հեռավորությամբ) գտնվում է Մևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը ***զբոսաշրջությունն է:***

Քաղաքի ***արդյունաբերության*** հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն շինանյութերի, քիմիական, սննդի և մեքենաշինության արդյունաբերության արտադրությունները:

Քաղաք Մարտունի

Մարտունի քաղաքը (2009թ. տարեվերջին՝ 12.1 հազ. բնակիչ) գտնվում է Մևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղն արդյունաբերությունն է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկվող արտադրանքի ծավալների զգալի կրճատում:

Քաղաքի ***արդյունաբերության*** հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, քիմիական և սննդի արդյունաբերության ճյուղերը:

Քաղաք Վարդենիս

Վարդենիս քաղաքի (2009թ. տարեվերջին՝ 12.7 հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահա-գործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում:

Քաղաքի ***արդյունաբերության*** հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Քաղաք Ճամբարակ

Ճամբարակ քաղաքի (2009թ.՝ 7.4 հազ.բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը **գյուղատնտեսությունն է** (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած:

Ճամբարակի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90%-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը, մարդ ¹	
			01.01.2009թ. դրությամբ	01.01.2010թ. դրությամբ
1	Գավառ	ք. Գավառ	25734	25727
2	Ճամբարակ	ք. Ճամբարակ	7375	7384
3	Մարտունի	ք. Մարտունի	12035	12085
4	Սևան	ք. Սևան	23162	23252
		գ. Գագարին		
5	Վարդենիս	ք. Վարդենիս	12685	12695

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը, մարդ ²	
			01.01.2009թ. դրությամբ	01.01.2010թ. դրությամբ
1	Ագատ		160	162
2	Ախալքաձոր		374	353
3	Ակունք		4733	4647
4	Աղբերք		252	251
5	Այգուտ	•Այգուտ •Ճապկուտ (Ջիլիխալու)	1046	1038

¹ ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ընթացիկ հաշվառմամբ:

² ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2010թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +5.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը, մարդ ²	
			01.01.2009թ. դրությամբ	01.01.2010թ. դրությամբ
6	Այրք		482	520
7	Անտառամեջ		155	162
8	Աստղածոր		4150	4220
9	Ավազան		210	206
10	Արեգունի		393	395
11	Արծվանիստ		3216	3231
12	Արծվաշեն		-	-
13	Արտանիշ		696	685
14	Արփունք		528	538
15	Բերդկունք		288	293
16	Գանձակ		4395	4384
17	Գեղամաբակ		123	126
18	Գեղամասար		1183	1183
19	Գեղամավան		2030	2016
20	Գեղարքունիք		2104	2117
21	Գեղաքար		168	169
22	Գեղիովիտ	•Գեղիովիտ •Նշխարք (Յանրդ) •Լեռնահովիտ	6518	6529
23	Գետիկ		538	535
24	Դարանակ		161	161
25	Դդմաշեն		2868	2855
26	Դպրաբակ		612	614
27	Դրախտիկ		932	936
28	Երանոս		6119	6119
29	Ջոլաքար		6795	6778
30	Ջովաբեր		1778	1780
31	Թթուջուր		1018	1008
32	Լանջաղբյուր		2434	2456
33	Լիճք		5393	5467
34	Լճաշեն		5102	5054
35	Լճավան		633	613
36	Լճափ		1215	1221
37	Լուսակունք		1570	1598
38	Խաչաղբյուր		1427	1427
39	Ծակքար		2755	2803
40	Ծաղկաշեն		669	672
41	Ծաղկունք		1191	1171
42	Ծափաքաղ		426	421
43	Ծովագյուղ		4233	4278

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը, մարդ ²	
			01.01.2009թ. դրությամբ	01.01.2010թ. դրությամբ
44	Ծովագարդ		2182	2199
45	Ծովակ		2865	2887
46	Ծովասար		2881	2921
47	Ծովինար		5133	5128
48	Կալավան	•Կալավան •Բարեպատ	175	181
49	Կախակն		524	522
50	Կարճաղբյուր		2415	2457
51	Կարմիրգյուղ		5986	5997
52	Կուֆ		196	181
53	Կուտական	•Կուտական •Չառիվեր (Աղյոխուշ)	258	259
54	Հայրավանք		863	841
55	Չորագյուղ		4871	4795
56	Չորավանք		168	143
57	Մաղինա		1228	1155
58	Մարտունի		685	680
59	Մաքենիս		492	489
60	Մեծ Մասրիկ		3479	3429
61	Ներքին Գետաշեն		7897	8016
62	Ներքին Շորժա		127	127
63	Նորաբակ		263 [◇]	267
64	Նորակերտ		993	992
65	Նորաշեն		546	551
66	Նորատուս		6917	6855
67	Շատջրեք		479	470
68	Շատվան		739	718
69	Շորժա		437	491
70	Չկալովկա		591	592
71	Ջաղացաձոր		182	182
72	Ջիլ		685	685
73	Սարուխան		8477	8417
74	Սեմյոնովկա		256	258
75	Սոքք		1047	1047
76	Վահան		1220	1228
77	Վաղաշեն		4275	4285
78	Վանևան		396	397
79	Վարդաձոր		3024	3019
80	Վարդենիկ		9729	9745
81	Վարսեր		2026	2024

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը, մարդ ²	
			01.01.2009թ. դրությամբ	01.01.2010թ. դրությամբ
82	Վերին Գետաշեն		5065	5073
83	Վերին Շորժա		24	28
84	Տորֆավան		528	531
85	Տրետուք		241	219
86	Փամբակ		473	472
87	Փոքր Մասրիկ		868	863

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10000	4936	5064
Ծնվածներ, մարդ	142	64	78
Մահացածներ, մարդ	79	39	40
Ամուսնություններ	63	X	X
Ամուսնալուծություններ	4	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	29.4	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	109	57	52
հանրակրթական	1404	672	732
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան-ստեղծագործական կենտրոններ	107	76	31
նախնական մասնագիտական (արհեստագործական)	13	2	11
միջին մասնագիտական	75	45	30
բարձրագույն մասնագիտական	93	55	38
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	28749
Մարզիկներ, մարդ	78	3	75
Զբաղվածներ, մարդ	4047
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	154	122	32
բժիշկներ	14
միջին բուժանձնակազմ	46
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	250	164	86
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1540

¹ Ցուցանիշները հաշվարկային են:

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	630	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	26108
թատրոն	158
համերգ	-	-	-
թանգարան	87
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	29	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	16	X	X
միջին ծանրության	8	X	X
ծանր	6	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X